

ՔՍԱՆԻՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյալ խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ.
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խաբարսիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Բ Ա Յ Վ Ա Ն Ե Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՆԵՐԿԱՅ 1901 ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(29-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՍԱՆԻՆԵՐՈՐԴ ԼՐԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՄՇԱԿ» ՀՐԱՏԱՐԱՎԱՊԻՄ ԵՆ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՆ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

Ա մ ե ն օ Ր Բ ա ջ ի տ օ ն ե Ր ի ն յ ա շ ռ ր զ ո ղ օ Ր Ե Ր ի յ .

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մ շ ա կ ի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ եւ տասն
ամսականը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ
ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. եւ մի
ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ ե Ր ի կ ա յ ի բաժանորդները պէտք է
վճարեն տարեկան 7 ռուբլի. Եւ Ր օ ղ ա յ ի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պ ա Ր օ կ ա ս տ ա ն ի
բաժանորդները 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարսայա եւ Բարօնսկայա փողոցների
անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակ-
ներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է գիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакция
«МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնների ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Զ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խելացի հասարակական կարծիքը կարող է
զգալի.—ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ստեփանոս
Նաղարեանցի սխալը. Հայոց թատրոնը Բագ-
ուում. Նամակ վարչապետից. Նամակ խմբագրու-
թեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լու-
րեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բրա-
զիլայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՌԻՆԵՐ.
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Նամակներ Պարիզից.

ԽԵՆԱՅԻ ՀԱՍՏԱՐԱՎԱՊԻՄ ԿԱՐԾԻՔԸ ԿԱ-
ՐՈՂ Է ԶՊՅԵԼ

Մի միջնորդական երևոյթ դարձնում է
իր վրա մեր ուշադրութիւնը: Վերջին ժա-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Պ Ա Ր Ի Զ Ի Ց

XIV

Երբ արանից երեսուն տարի առաջ պրոեսա-
կան զօրքը, կոտորելով եւ աւերելով ամեն ինչ
իր ճանապարհին, գնում էր դէպի Պարիզ, հեռու
հիւսիսում մի նօրվէզայի ժողովներ էր գումա-
րում յօգուտ Ֆրանսիայի, կոչեր ու յօդուածներ էր
տպագրում պրոեսացիների դէմ եւ աղերսագիր-
ներ էր ուղարկում եւրօպական պետութիւն-
ներին, որ սրանք միջամտեն եւ ազատեն Ֆրան-
սիան վերջնական անկումից: Այսօր Ֆրանսիան
իր պարտքը կատարում է դէպի այդ նօրվէ-
զային, տօնելով նրա գրական գործունէու-
թիւնը եւ նուիրելով յատկապէս ի պատիւ նրան
թատրոնական երկու արտակարգ ներկայացում:

Տօնախմբութեան հերոսը ծերունի նօրվէզայի
գրող Բեօրնստէրնէ Բեօրնստէն է:

Փետրվարի 19-ին եւ երէկ, մարտի 3-ին, Պա-
րիզի շնորթ թատրոնում ներկայացվեցին «Մարգ-
կային ոյժից վեր» դրամայի առաջին եւ երկ-
րորդ մասերը նոյն իրան հեղինակի, Բեօրնստէի
ներկայութեամբ:

Պարիզի դրական-թատերական չըմանները
ունէին երկու նպատակ. նախ՝ տօնել հուշակա-
ւոր նօրվէզացու բանաստեղծական անզուգա-
կան տաղանդը, ապա մի համակարկան յոյց
անել Բեօրնստէին, որպէս հասարակական ազնիւ
գործիչին: Նա հուշակաւոր է եւ իբրեւ հրապա-
րակախօս:

Եւ յիշաւ չըմապատմած իր հայրենակիցների
կարծրացած եւ սառն, որպէս չէնց իր հայրե-
նիքի ընտելիւնը, մտքերով՝ Բեօրնստէն երկար

մանակները պակասել է դիֆֆամացիայի
օրէնքով դատի կանչելը: Մեր լրագրի մէջ
լոյս տեսած յօդուածների առիթով բացած
դատերը չեն դիմում դիֆֆամացիայի կաշ-
կանդող եւ սահմանափակող օրէնքին, այլ
տալիս են մեղադրող կողմին ազատու-
թիւն հաստատելու իր գրածները բոլոր
նրան մատչելի միջոցներով եւ եղանակներով:

Դիֆֆամացիայի կամ անուանարկութեան
օրէնքը իր ներկայ խմբագրութեամբ կատա-
րելապէս կապում էր յօդուածագրի ձեռ-
քերը, որովհետեւ գրածները ապացուցա-
նելու համար օրէնքը պահանջում էր
դրամոր վկայաթղթեր, կամ նոյն իսկ զըր-
կում էր այդպիսի ապացույցներ անգամ
բերելու իրաւունքից:

տարիների ընթացքում անյողողող տարել է
առաջադիմութեան դրօշակը: Առանց յուսահատ-
վելու թանձր եւ կաշկանդիչ բուտիայից, որից
սակայն շատերը, նրանց թուում եւ իրանքը,
արդէն յուսահատվել էին, Բեօրնստէն մարտն-
չում է իր ժամանակի տիրող հասարակական
յետամիտց եւ սխալ հայեացքների ու հակացո-
ղութիւնների դէմ:

Տանեակ տարիներ նա կուում է հասարա-
կական գործիչին յատուկ բոլոր ազնիւ միջոց-
ներով: Պօռնիկայից սկսած եւ դրամայով վեր-
ջացած՝ նա ապարդէզ է դալիս որպէս ընդհառա,
խմբագիր, դերասան, թատրոնի կառավարիչ եւ
բանաստեղծ ու բարոյագէտ եւ առանց դադարի
գործում է չորս յիսուն տարի:

Բնորոշ է նօրվէզացու համար այն փաստը,
որ հայրենասիրական եւ իր հայրենիքին վերա-
բերեալ հարցերից դատ՝ Բեօրնստէն ապրել է,
այսինքն մտածել, սիրել եւ տանջվել է ուրիշ
երկրներում եղած ցաւերով: Նա շատ մօտ է
ընդունել իր սրտին եւ այժմ ընդունում Ֆրան-
սիայում պատահած ամեն մի անցքը: Որպէս
Հէյնէն եւ Բեօրնէն, ամբողջ տարիների ընթա-
քում ապրելով Պարիզում, նա կարծես ուղեցել
է ասել, որ ամեն մարդ ունի երկու հայրենիք՝
նախ իր սեփականը, ապա եւ Ֆրանսիան:

Այս բոլորը աչքի առաջ ունենալով, Պարիզի
գրական-հասարակական չըմանները անհրաժեշտ
համարեցին հրապարակօրէն ցոյց տալ իրանց
հիացումը եւ յարգանքը դէպի Բեօրնստէի տա-
ղանդը: Ինչպէս ասացինք, նրան տօնեցին երկու
օր, զվարճութեամբ այն պատճառով, որ «Մարգկա-
յին ոյժից վեր» դրաման իսկապէս երկու մա-
սի է կազմված եւ մէկը միւսին հետ չէ կապ-
ված *):

*) Բացի այդ երկից, Բեօրնստէն ունի եւ ուրիշ բազ-
մաթիւ գրամաներ: Մէջի են ընկնում մանաւանդ ձեռ-
նագիրները:

Մամուլը միշտ բողոքել է այն դատ սկը-
սողների դէմ, որոնք դիմել են դիֆֆամա-
ցիայի օրէնքին եւ բազմաթիւ յօդուածնե-
րով, ֆէլիէտօններով, նկատողութիւններով
ցոյց է տուել, որ դիֆֆամացիայի օրէն-
քով դատ տանելը զեւ չէ նշանակում իս-
կապէս հերքել մամուլի մէջ լոյս տեսած
աննպատակ կարծիքները իրան պաշտպանող
անձի կամ հիմնարկութեան մասին: Այլ
յաճախ ընդհակառակը. դիֆֆամացիայի
դիմելը մի կողմնակի ապացոյց է եղել այն
բանի, որ դատ բացողը վախեցել է գործ
սկսելու այնպիսի դատաւարական հիմուն-
քների վրա, որոնք կարող էին միջոց տալ
մեղադրողին ապացուցանելու իր բոլոր
գրածները:

Մամուլի ձայնը կամաց-կամաց արձա-
գանք էր գտնում հասարակութեան խաւե-
րում եւ այժմ մենք նկատում ենք, որ
սկսվում է կազմակերպվել հասարակա-
կան կարծիքի դիֆֆամացիայով դատա-
ւարութեան դէմ:

Դա ուրախալի երևոյթ է: Եւ ցանկա-
լի է, որ հասարակութիւնը կարողանար
շատ ուրիշ դէպքերում եւս խելացի կար-
ծիք կազմել իրերի եւ յարաբերութիւննե-
րի վրա եւ զսպել մարդկանց վատ եւ անվա-
յել քայլեր անելուց:

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՍԽԱԸ

«Մշակի» № 37-ի մէջ մենք տպագրեցինք
«Մի առաջարկութիւն» յօդուածը: Այդտեղ
մենք, բերելով մի կտոր հանդուցեալ Ստեփա-
նոս Նաղարեանցի նամակից, որ տպված է
«Լույս» հանդէսի այս տարվայ առաջին հա-
մարում եւ որի մէջ յիշված է «Գրիգոր Ար-
րուշի ցանցառաւիտ ողջտ իրաւաբանը», մենք
մանրամասն փաստերով ապացուցեցինք, որ այդ
խօսքերը չեն վերաբերում «Մշակի» հանդու-
ցեալ խմբագիր Գրիգոր Արրուշուին, քանի որ
«Մեղուի» մէջ տպված այն յօդուածը, որի մա-

Դրաման (որը լաւ հատկանշաւ համար ան-
հրաժեշտ է տեսնել լաւ ընթիւ վրա) կարելի է
ասել ամբողջովին իդէական է: Իդէական է այն
մտքով, որ ներկայացնում է այս դէպքում ոչ
թէ հասարակութեան բարքերը, սովորութիւն-
ները, կենցաղավարութիւնը, այլ մարդկային
զուտ մտաւոր ու հոգեկան աշխարհը: Պիէտի
դրամատիքը առաջ է դալիս հաւատի ու իրա-
կանութեան մէջ եղած պայքարից: Մի կողմից
հաւատ դէպի հրաշքը, միւս կողմից մարդկա-
յին անկարողութիւնը իրական ոյժերի դէմ:
Հեղինակը ցոյց է տալիս, որ կան պայմաններ,
որոնք մարդկային ոյժից վեր են, եթէ մարդ
չը կամենայ միայն փոփոխել այդ պայմանները
իրականութեան պահանջներին համա-
ձայն: Եւ եթէ մարդ իր իդէալին համեմատ
մար իր յոյսը դնէ մի իդէական կամ մի հա-
սարակական հրաշքի վրա—նրա ուղածը, սպա-
սածը, միջոց եւս նրա գործածը կը լինի մարդ-
կային ոյժից վեր եւ հետեւապէս անիրագոր-
ծելի:

Ան եւ մի քանի խօսքով դրամայի բովան-
դակութիւնը: Հիւսիսային նօրվէզիայի յետամ-
նաց գիւղերից մէկում, ռուր համարեա ամբողջ
ձմեռը մութ է լինում, իսկ ամառը ամբողջ
քսան եւ չորս ժամ լոյս է լինում, ապրում է
մի պատուր իր ընտանիքով: Ասում են, որ
պատուր Սանդը հրաշքներ է անում: Նա աղօ-
տոյք (ուր բարոյագիտական հարց է արժեքված),
«Մանկութիւն» (փողի հարցը), «Վարդի» (քաղաքա-
կան հարց) եւ այլն: Մարդկային ոյժից վեր գրված է
մօտ 7—10 տարի առաջ եւ նշանաւոր է թէ իր ընդհանուր
փիլիսոփայական խմբագրում, թէ ինքնուրոյն բովան-
դակութեամբ եւ թէ իր գեղարուեստական ձեւերով: Նա
տեղը ունեն գրած իդէական դրամաներ, բայց դե-
ռանցից միայն մի Բեօրնստէի, մի Իրաւէի, մի Հաւապո-
մանի գրածները—գեղարուեստական գրականու-
թիւն կարող են կոչվել:

սին խօսում է Ստեփանոս Նաղարեանց, պատ-
կանում է Սենեքերիմ Արծրունուն: Մեր այդ
յօդուածի վերջում մենք առաջարկել էինք Բա-
գուր Որդէն քահանայ Սիրգաբէկեանին բա-
ցատրել թէ ինչպէս է, որ Նաղարեանցի նա-
մակի մէջ մտել է մի այդպիսի սխալ եւ խնդ-
րել էինք նրան ուղարկել մեզ Նաղարեանցի
այդ նամակը:

Երկու օր առաջ ստացանք Որդէն քահա-
նայից հետեւեալ նամակը.

Բագու, փետրվարի 21-ին

Կարդացի «Մշակ»-ի 37 №-ում ձեր «Մի ա-
ռաջարկութիւն» յօդուածը: «Լույս»-ի մէջ տպված
հանդուցեալ Ս. Նաղարեանցի 1872 թ. յունի-
սի 5-ին Մօսկվայից իմ հասցէին գրած նամա-
կը ճիշդ է: Ձեռագիր նամակի մէջ գրված է
«Գրիգոր» եւ ոչ «Սենեքերիմ»:

Եւ ուղղակի խմբագրութեանը կողմից
հանդուցեալ Նաղարեանցի իսկական ձեռքով
գրած նամակը, սակայն բարեւոյ համարեցի եւ
հայր տէր Գրիգոր կասկածը փարատելու համար՝
ուղարկել Նորին Արքանապատուութեան հաս-
ցէին, որ թէ ինքն իր աչքով տեսնէ եւ կար-
դայ. որ իսկականի մէջ «Գրիգոր» է, եւ թէ
ձեզ ցոյց տայ, որ դուք եւս միամտիք: Իսկ
դատել թէ մին եւ թէ միւս կողմը
խնդրեմ:

Որդէն ա. ք. Սիրգաբէկեանց

Այսպէս էլ կարճաճառեցինք:
Մեզ համար նշանակութիւն չունի այն, որ
Որդէն քահանան չէ բարեհաճել ուղղակի մեզ
ուղարկել Նաղարեանցի նամակը, բայց ցաւում
ենք, որ նա ընտրել է մեր հայեացքով մի ծուռ
ճանապարհ. պարտք է համարել նամակը առաջ
Գիւտ քահանայ Աղանեանցին ուղարկել՝ քա-
«կասկածը փարատելու» համար. գուցէ Որդէն
քահանան իր պաշտօնակցին աւելի է հաւա-
տացել, քան «Մշակի» խմբագրութեան—այդ
իր գործն է: Բայց ահա ինչ է դուրս եկել
Միջազգային քահանայի այդ վարմունքից:
Գիւտ քահանայ Աղանեան մի նամակով խնդ-
րում է մեզ ընչանակել տեղ եւ ժամանակ,
ուր կարող լինեմ ցոյց տալ ձեզ, մի քանի ան-
ձանց ներկայութեամբ, յիշալ նամակը:

Մենք չենք կատարի Գիւտ քահանայի այդ
խնդրքը: «Մշակի» խմբագրութիւնը իրան

թում է իր հիւանդների հետ միասին եւ նրան
հաւատացողները առողջանում են. կոյրը տես-
նում է, խուլը լսում, իսկ կաթուածահարը ոտի
է կանգնում: Նա յարգված է իր համազօրու-
յիների կողմից եւ նրա հոյակաւ ամեն տեղ տա-
րածված է: Սակայն նրա կինը, ահա ութ տա-
րի է, որ անկողնում կաթուածահար ընկած է
եւ Սանդը անկարող է նրան ոտի կանգնեցնել:
Նա չէ կարող իր կնոջը առողջացնել, որով-
հետեւ այդ կինը չէ հաւատում: Իդուր Սանդը
աղօթում է, իդուր ոյժ է խնդրում Երկնից,
իդուր նա իր որդուն՝ Էլիին եւ իր աղջկան հա-
մոզում է ձեռք ձեռքի տուած միասին աղօթել,
որ նրանց մայրը առողջանայ: Ոչ նրա աղ-
ջիկը եւ ոչ էլ նրա որդին չունեն նրա հաւա-
տը դէպի գերբնականութիւն:

Սանդը չէ յուսահատվում, նա ուղում է ա-
ռողջացնել իր կնոջը. նա մենակ կազօթէ, նա
հաւատում է հրաշքին: Սանդը զգում է, որ
այդ հրաշքը անհրաժեշտ է, որովհետեւ նա
տեսնում է իր հայրենակիցների սկզպոյթիքը,
տեսնում է, որ այդ գրութիւնը նրանց տան-
ջում է, համոզվում է, որ եւ նոյն ժամանակ, որ
իր մեծ հրաշքով նա կարող է յուսատուր մարդ-
կանց՝ մոխրով ծածկված արտերը եւ այդպիսով
լոյս, կենքը ներշնչել ամենքին: Պատուր
Սանդի հրաշքների լուրը ամեն տեղ տարած-
ված է եւ չորս կողմից ժողովուրդը ու պատ-
ուրները գալիս են նրա մօտ անձամբ ստու-
գելու իրանց լսածները: Նրանց թուում է եւ
պատուր Բրատը, որը այնքան տանջվում է ա-
մուր հաւատի բացալալալութիւնից եւ որը ու-
ղում է տեսնել մի մեծ հրաշք, որ հաւատայ.
«Ոչ թէ հաւատը, այլ հրաշքն է մեզ պակա-
սում», ասում է նա. եւ եթէ հրաշք տեսնէ,
պէտք է իրան ամենաբարձրիկ մարդը համա-
բէ, մի մարդ, որի համար անկեղծ գործու-

Թոյլ չի տայ այդպիսի ձեւով նայել մի թղթի, որ առնուազը մի հասարակ նամակ է եւ հետեւաբար կարող էր ուղարկվել մեզ առանց մի քանի անձանց ներկայութեան: Գիւտ քահանայի հետ մենք գործ չենք ունեցել եւ երբէք մտադիր չենք պատել անել ներքին, կատարելով այս տեսակ պայմանները մեր «Մի առաքարկութիւնը» նրան չէր ուղղած, այլ իրենք քահանային:

Եւ եթէ այսօր այդ նամակը մեր ձեռքում չէ, մենք ամենայն յօժարութեամբ վկայում ենք, որ եղած մի քահանայ, որ վստահութիւն չունեցաւ «Մշակի» խմբագրութեան վրա: Վերաբերվել այդ բանին մենք իրաւունք չունենք... Այժմ վերջացնենք Ստեփանոս Նազարեանցի նամակը: Հիմնվելով իրենց քահանայ Միգրաբէկեանի նամակի վրա, մենք յայտարարում ենք, որ հանգուցեալ Նազարեանցի գրչի սխալ է «Գրիգոր» անունը 1872 թ. ակաւոր յունիսի 5-ին գրած նամակի մէջ: Փաստերը մենք բերել ենք մեր «Մի առաքարկութիւն» յօդուածի մէջ: Աւելացնում ենք եւ այն, որ Նազարեանցի այդ նամակը մեզ չափողվեց տեսնել, որովհետեւ այնպիսի մի հասարակ բան, ինչպէս է այդ նամակի մեզ ուղարկելը, այնպիսի ձեւի մէջ դրվեց, որ մենք հարկադրված եղանք հրաժարվել նրան տեսնելուց:

ՀԱՅՈՑ ԹԱՍՏՐՈՆԸ ԲԱԳԴՈՒՄ
(Հանդիսատեսի նկատողութիւնները)
(Նամակ Թագուից)

Վերջացաւ Թատրոնական սեղօնը, հեռացան դերասանները եւ իւրաքանչիւր թատերասէր ակամայ հարցնում է ինքն իրան. «Ի՞նչ եղաւ եւ ի՞նչ պիտի լինի ապագայում մեր Թատրոնը»: Բաւական հաստատ աղբիւրից եւ լսեցի, որ առաջիկայ սեզոնին էլ պիտի ունենանք խումբ եւ թէ դրա համար պէտք եղած հարկաւոր պատրաստութիւնները արդէն տեսնված են: Թէ որքան ճշմարիտ է այդ լուրը, մենք չը գիտենք, այնուամենայնիւ օրումացանք, բայց...

Բազում հայերէն ներկայացումները, կարող ենք ասել, զգալի պէտք են դարձել մեզ համար, եւ մեր Թատրոնը ունի իր մշտական յաճախորդները ծառայող, արհեստագործ եւ փոքր-բոլորում դասակարգերից: Այդ երեւոյթի ի նկատի ունենալով, մենք ուզում ենք մի քանի խօսք ասել թէ այս տարվայ եւ թէ առաջիկայի հայերէն ներկայացումների մասին:

Տարրական ճշմարտութիւն է, որ առանց որոշ բնութագրի ամենալաւ անսամբլով խումբը չէ ի վարող աշխատութիւն ունենալ: Այդ բանը մեր Թատրոնի ինտելիգենտ ղեկավարները շատ լաւ գիտեն, բայց այնուամենայնիւ նրանք անխոնջութիւն ունեցան առանց բե-

պէրտուարի ներկայացումներ սկսել եւ նրանց անխոնջութեան պտուղը քաղեց հասարակութիւնը, միշտ հասարակութիւնը...

Մի անգամ ներկայացում տեղի չունեցաւ, որովհետեւ ձեռքի տակ յարմար պիտի չը կար, երկրորդ անգամ դարձեալ տեղի չը պիտի ունենար... Բայց... շուտ ճարը գտան... Բենեֆիս տուին մի դերասանուհու, որին հրաւիրելիս եւ նոյն իսկ մինչեւ այդ օրը, հակառակ նրա քանի դիմումներին, զլացել էին տալ բենեֆիս... Չէ որ բենեֆիցիանտը իրաւունք ունի իր բենեֆիսի համար պիտի ընտրել եւ իր ընտրութեան պատասխանատուութիւնը իր վրա առնել, որով խմբի ղեկավարները մի կողմից պատասխանատուութիւնից ազատվեցին, միւս կողմից յիշեալ դերասանուհու սիրտը շահեցին: Մի օր էլ յայտարարվեց, որ շուտով տեղի կունենայ երկու երիտասարդ դերասանների բենեֆիսը, բայց նրանց բենեֆիսից շուտ տեղի ունեցան մի քանի բենեֆիսներ եւ մի շարք ներկայացումներ: Դրա պատճառը բացատրել չենք ուզում, բայց կասենք, որ որոշված բեպէրտուար եթէ կազմված լինէր, այդ անկարգութիւնները տեղի չէին ունենալ: Մի գեղեցիկ օր էլ յայտարարվեց, որ շուտով կը ներկայացնվի յայտնի մի հեղինակի յայտնի պիէսները մէկը, բայց մենք այդ պիէսը բեմի վրա տեսնելու բաղդ չունեցանք: Եւ այդ գեղեցիկ օրից յետոյ սկսվեցին գեղեցիկ ներկայացումները. բաղդի գործ, ինչ որ ձեռք էր ընկնում, դնում էին բեմի վրա, միայն մնացին «Ջաւահիր» ու «Բոր» թերեզման:

Առանց բեմասօրի խումբ հրաւիրելը դարձեալ անխոնջ բան է, որովհետեւ դրա հետեւումը այն կը լինի, որ բեմի ետեւը բաւելօնեան աշտարակայնութիւն կը դառնայ եւ դերասանները իրար հասկանալի անկարող կը լինեն, իսկ դրա անմիջական հետեւումը այն կը լինի, որ առաջնակարգ դերասանները իրանց քմահաճոյքի համեմատ դեր կը վերցնեն, եւ, որ գլխաւորն է, անսամբլը միշտ թոյլ կը մնայ, եւ սակայն անսամբլը ներկայացման հոգին է:

Բացի դրանից, ամենազլխաւոր թերութիւնն այն է, որ ինքնուրոյն եւ մաքուր հայերէն լեզուով պիէսներ չեն դնում մեր Թատրոնի ղեկավարները: Մեր Թատրոնի ղեկավարները լաւ ըմբռնում են, որ մեր Թատրոնը մշտական յաճախորդներին պիտի մատուցէ իրենց անմիջական, այլ եւ՝ տարրական կրթութիւն չեն ստացել եւ ինքնուրոյնութեամբ ձգտել են սովորել ու զարգանալ. այժմ, բնթերցող, հարցնենք այդ պարտքերից մէկին, «Բեն» հասկացար «Պատի» պիէսից:—Հասկացանքում են ձեզ, որ «Բեն» պիտի պատասխանէ եւ այդ պիէսի ներկայացումը միշտ քիչ հանդիսականներ է գրաւում: Միթէ աւելի լաւ չէր լինի նրան հասց-

նել այնտեղ, որ նա հասկանայ այդ տաղանդաւոր երկը եւ փոխանակ սառելու՝ աւելի տաքանայ: Մեր Թատրոնի ղեկավարներին մէկը նոյն իսկ մերթեյ կարգաւ մի ինքնուրոյն գրութեամբ... որովհետեւ գրողը սկսեալ է, տաղանդ չէ... Չէ, որ տաղանդները տաղանդ չեն ծնվում, չէ որ առանց քաջալերութեան տաղանդը անպէտքանում է...

Ենթադրենք թէ մեր Թատրոնի ղեկավարները ուզում են տաղանդով կերակրել մեզ, բայց չէ որ օտար տաղանդները պէտք է թարգմանել հայերէն մաքուր գրական բարբառով. ինչու քաղաքային ուսումնարանից չըջանաւորաւ աշակերտն անգամ նկատողութիւն է անում հայ թարգմանչի լեզուի մասին: Ինչու յայտնի դերասաններից մէկը խոտուվաւում էր մի չըջանի մէջ, որ մինչեւ այսօր նրան չէ պատահել մաքուր հայերէն թարգմանված մի պիէսում դեր ունենալ: Եթէ չունենք լաւ թարգմանիչներ, պէտք է նրանց գիտել, առաջարկել: Միթէ դժուար է Բազում ձաւրի 2 կամ 3 մարդ, որոնք իմանան գնահատել թարգմանիչների լեզուն: Մենք հաւատացած ենք, որ կանք Գր. Նիկիեան:

ՆԱՄԱԿ ՎԱՐՇԱՎԱՅԻՑ

Փետրվարի 15-ին

Իւրաքանչիւր տարի Ռուսաստանի զանազան քաղաքներն են դիմում տարբեր ուսման տէր երիտասարդներ, որոնց բոլորի նպատակն է շարունակել ուսումը: Դա հասկանալի է եւ նոյն իսկ գովելի այնպիսիների վերաբերմամբ, որոնք աւարտել են միջնակարգ դպրոցներ եւ կովկասում բարձրագոյն դպրոցներ չը լինելու պատճառով, դիմում են կամ Ռուսաստան կամ արտասահման: Սակայն նոյնը մենք չենք կարող ասել զանազան միջնակարգ դպրոցների առաջին, երկրորդ կամ երրորդ դասարաններից: Դուրս եկած պատանիների մասին: Եթէ այդպիսիներ, դեռ միջնակարգ դպրոցները աւարտելու յուսով, իրանց մէջ բուսական եռանդ եւ ոյժ են զգում եւ այնպէս ուղեւորվում հեռու Ռուսաստան, նոյնը կարող էին անել Կովկասում, իրանց տանը, աւելի շատ յարմարութիւնների մէջ:

Այդ թերութիւնները աւելի մեծ կարծիքի են իրանց գիտութեան եւ գրութեան մասին, քան իրօք ունեն: Բաւական է հազնել մի հին ֆօթմայ, կուրծքը դուրս պրծեցնել եւ այնուհետեւ նա կամ իրան վաղված ուսանող է համարում ուրիշների առաջ պարծանքով, կամ գիմնազիայի 7-րդից կամ 8-րդից դուրս եկած: Սակայն տարիներ անցնում են տարիների ետեւից եւ մեր պատանին ամեն անգամ մի օր եւ է ծանօթի հարցին, թէ ինչ բանի է, պատասխա-

նաւոր: Մէկը ուզում է հրաշքով փրկել եւ ընկնում է. միւսը նպատակ է դնում ուսման մի պայթումով մարդկութեան նոր եւ երջանիկ կեանք ցոյց տալ եւ միայն զոհվում է իր սպասած հրաշքին: Թէ Սանդը եւ թէ Էլին այնպիսի միջոցների դիմում, որոնք չեն հասկանալի: Եւ ամայի վրաստակներն ոչ ընտանի կեանքին եւ ոչ էլ անտեսական-հասարակական յարաբերութիւններին: Այստեղից միակ միջոցով եղաւ կարգութիւնը կարելի է անել.—պէտք է ճանաչել այն պայմանները, որտեղ մարդ գործում է:

Թողնենք դրամայի առաջին մասը եւ կանգ առնենք երկրորդի վրա: Էլին մի օրվայ մէջ մի ուսմանով կամեցաւ շահագործված բանուորների գրութիւնը բարելաւել եւ մի եւ նոյն ժամանակ նրա գործունէութիւնից ոչ մի գրական բան դուրս չեկաւ: Ինչու: Նա չըմբռնեց թէ ինչ բան են անտեսական եւ նրանից կախված հասարակական պայմանները: Նա կարծում էր, որ ոչնչացնելով չորս հինգ հատ շահագործողներ, կը չքանայ եւ գոյութիւն ունեցող շահագործումը: Իդէալիստ Էլին չէր ուսումնասիրած այն հասարակական կարգերը, որ նա առում էր, եւ ի հարկէ չը հասկացաւ, որ նոյն այդ կարգերը ամբողջովին հիմնված են շահագործված եւ շահագործվելու սկզբունքի վրա: Հետեւապէս, մի քանի անհատ մեծ դեր չեն խաղում, իբրեւ շահագործողներ. նրանց կեանքից անհետ չէ խողոր սեփականութեան այս կամ թէ երկխոսական վրէժ գէպի այդ շահագործողները, այլ աւելի լուրջ եւ զրական գործունէութիւն, որ ուղղված լինէր ոչ թէ այդ անհատների, այլ դրանց դասակարգը ծնեցնող պայմանների դէմ: Դրամայից իմանում ենք, որ գործողութիւնը կատարվում է Նորվեգիայում եւ հարցը ոչ թէ քաղաքական ազատութեան մասին է, այլ անտեսական փոփո-

նում է չինծու ինքնավստահութեամբ, թէ մըտադիր է կամ համալսարան, կամ մի ինչ որ ինտիմութեան մասին:

Մի քանի օր առաջ պատահեց իմ մի ծանօթիս, որի մասին մի քանի տարի առաջ, դեռ Կովկասում, բարեկամները պատմում էին, թէ երկրորդ դասարանից վաղվել է եւ այժմ ոչնչացվ էլ ուզում պարսպել: Իմ հարցիս, թէ ինչ է անում այստեղ, նա պատասխանեց շատ բարդ բարբառով. «Եկալ ըմ ըստեղի պոլուտեխնիկումը մոսկովա: Ես մնացի մի վայրկեան շուրաւ, իսկ նա ինքնաբաւական ժպիտով բերեցին էր ոլորում:—Բայց միթէ հասունութեան վկայագիրը արդէն ստացել էք, դարձեալ հարցրի ես, մի քանի չիթթութիւնի յետոյ, «Հա, էտ գիւտում ում հինչ ա հասունութեան, ատեստատ զրէյտսին ա, տա տժար պեան չի. մայիսին էտ կը ստանա, օքտոտսին էլ կը մտնեմ ինժիներին»:

Ընթերցող, երեւի, արդէն կ'երեւակայէ, թէ ինչ նմուշ բաղդ ունեցայ հանդիպել: Այսպիսի օրինակներով, որոնք միայն զանազան արտաքին գոյներով են իրարից զանազանվում, իր են Ռուսաստանի բոլոր համալսարանական քաղաքները: Թէ այդպիսիներից ոչ մէկը իր ընտրած կէտ նպատակին չի հասնի, դա անհրաժեշտ փաստ է: Այժմ տեսնենք, թէ ինչ բարոյական գոծիք են ներկայանում այդպիսիների համար մեծ քաղաքները:

Մոտենք եւ բարեկամները բաւական խիտ կ'օտարից հեռանալով, ազատ շունչ է քաշում մեր հերոսը, առաջին անգամ իրան տեսնելով մարդաշատ քաղաքում: Այստեղ մարդիկ նրան բոլորովին ուրիշ կերպ են երեւում. բոլորն էլ կրթված, բոլորն էլ ինտելիգենտ, քաղաքավարի Փողոպային կանանց հագուստը նոյն իսկ յարգանք է ներշնչում նրա մէջ դէպի այդ բարոյականութեամբ աղքատ արարածները: Մի քանի ժամանակից յետոյ նրան տեսնում են առանց մի կօպէլի, առանց հագուստի եւ որ ամենատեսակով է՝ հիւանդ: Առողջանալուց յետոյ, անցնում է դարձեալ դէպի այդ արարածները զորանքով եւ ատելութեամբ աղքատ իր զաւակը, եւ ապա նա հաշտվելով իր կոյր բաղդի հետ, ընտելանում է այդ կեանքին եւ այնուհետեւ ամեն ինչ դնում է իր սովորական շաւղով: Այդ երիտասարդները, որոնք կարող էին իրանց կենսունակ ոյժերը իրանց հայրենիքում գործ դնել մի օր եւ է արհեստում, կամ մի այլ անուարարական գործում եւ դրանով չօչափելի օգուտ ստանալ, որին նրանք եւ ձգտում են, որովհետեւ նրանց չէ հետաքրքրում գիտութիւնը, այլ ինժեներութեան լաւ վարձատրվող արհեստը.—այստեղ կորցնում են իրանց երիտասարդ տարիները առողջութեան հետ եւ դժբաղդացնում թէ իրանց եւ թէ շատ շատերին իրանց հետ:

Խումբներ: Էլ ինչ դեր կարող էր խաղալ մի ինչ որ ֆիզիկական ոյժ, որ ամենաշատը ապակիներ, տներ եւ մի քանի մարդիկ կարող է ոչնչացնել, բայց մի եւ նոյն ժամանակ անքնդունակ է մի օր եւ է հասարակութեան ամբողջ կազմուածքը յեղափոխել. դա կը լինէր հրաշք, իսկ հրաշքը մարդկային ոյժից վեր է:

Էլին անշուշտ գործում էր յայտնու շահագործված բանուորների. բայց ինչ արեց: Բնութաբան դրամայից իմանում ենք, որ Էլին չը կազմակերպեց նրանց, չը զարգացրեց նրանց դասակարգային ինքնագիտակցութիւնը, նա ցոյց չը տուեց եւ չը պարզեց նրանց այն դերը, որով նրանք հասարակական հարթութեան արտադրողներն են հանդիսանում եւ սակայն մի եւ նոյն ժամանակ ոչինչ չեն վայելում այդ հասարակութիւնի: Էլին ուղեց ծառայել մարդկութեան, բայց ցոյց տուեց միայն իր անկարողութիւնը, անկարողութիւն, որ անխուսափելի էր, որովհետեւ Էլին, ինչպէս եւ նրա հօր Սանդի միջոցները—բարոյական կամ նիւթական հրաշքների գիմելը—չէին համապատասխանում ապագայ խոստացող իրականութեան պահանջներին:

Սանդը ուղեց նոր կեանք ներշնչել եւ դիմեց արդէն հնացած կեանքի տարրերին—հրաշքին. եւ դա նրա ոյժից վեր էր, որովհետեւ հին երգերով նա ուղեց օրօր ասել մարդկային զարթնած նոր սկզբունքներին: Էլին գործեց մարդկութեանը երջանութեանը մարդկային ոյժից վեր էր, որովհետեւ, ինչպէս արդէն ասացինք, նա անպարտաւոր էր եւ չէր ըմբռնած կեանքի պայմանները:

Ռուբէն Բերբերեան

նէութեան մի լայն ասպարէզ է բացվելու: Միջոցաւ Բրատը իր բարոյական տանջանքների մասին է պատմում ժողովրդին, որը նոյնպէս հետեւ տեղերից եկել է հրաշք տեսնելու, պատուր Սանդը մենակ աղօթում է, աղօթում է անվերջ: Եւ յիշելի, նրա կինը յանկարծ սկսում է տեղից շարժվել, յետոյ վեր է կենում եւ սկսում է մենակ մօտենալ դարմացած եւ հիացած ամբողջին: Բայց հազիւ մի քանի քայլ արած՝ նա ընկնում է եւ մեռնում: Յուզված եւ ամբողջ շղթայով լարված Սանդը միայն կարողանում է բացատրել, աշխարհ յառած զէպի վեր: Բայց այդ չէր, որ խնդրում էի, թէ իսկապէս... եւ չունչը արձակում է:

Սրանով առաջին մասը վերջանում է: Երկրորդ մասը մեզ տանում է «Դժոխք» կոչված գործարանի շուրջը, ուր մերկ եւ քաղցած գործարանական բանուորները, մի քանի շաքավ է, որ գործադուլ են արել եւ չեն բանում: Դրանց մօտ մենք տեսնում ենք նախկին պատուր Բրատին, որ այլ եւս չէ անհանգստացնում երկինքը. նա իր ամբողջ գործունէութիւնը նուիրել է մարդկանց երկրաւոր կեանքը լաւացնելուն: Այդ նպատակը դարձել է նրա իդէալը, նրա հաւատը: Նա կազմակերպում է բանուորներին. ցոյց է տալիս գործելու եւ կրօնական միջոցները եւ պայմանները: Այդ գործունէութեան մէջ գրել է նա եւ իր ընկերները, Սանդի որդուն Էլին, որ սակայն չէ հաւատում եւ չէ հաւատում Բրատի ընտան ընթացքին: Էլին կարծիքով, Բրատի բոլոր գործունէութիւնը եւ դանդաղ է եւ անզօր շահագործված բանուորներին աւելի լաւ գրութեան հասցնելու համար: Նա մոտենում է ոչնչացնել երկրի թշուառութիւնը մի հարուածով. գոցեց դա կը լինի հրաշք, բայց ինչ արած՝ նա հաւատում է, որ այդ հրաշքը կարելի է, որովհետեւ այդ հրաշքը կախված չէ երկնքից, այլ իր

ձեռքի ամբողջութիւնից: Էլին վճռում է գնալ եւ մի ուսմանով ոչնչացնել այն ամբողջ, որտեղ այդ օրը գործարանատէրերի ընդհանուր ժողով է տեղի ունենում օրվայ ինտելիգենտ մասին: Նա իրագործում է իր խիզախ ծրագիրը եւ ինքն էլ գործարանատէրերի հետ միասին թաղվում է ամայի վրաստակների տակ: Այդտեղ էր հասել նրա ոյժը եւ սակայն իրականութիւնը նրա ոյժից վեր էր: Նա հաւատում էր իր հարուածին, իր հրաշքին, որ մի ակնթիւ Թարթում ամեն ինչ պիտի փոփոխէր, եւ սակայն բանուորների թշուառութիւնը չը փոքրացաւ դրանից. ընդհակառակը քաղցը եւ զրկողութիւնը քանի գնաց աւելի եւս մեծ ծաւալ ստացաւ: Այդպէս, ուրեմն, հրաշքով փրկելու նպատակը չէ իրականանում: Այստեղ էլ, ինչպէս դրամայի առաջին մասում, ցոյց է տրվում, որ իրական կեանքը չէ ընդունում հրաշք, լինի աղօթքների, լինի զինամիտի միջոցով: Մարդկային ոյժից վեր է՝ ուզում է ասել, որ որոշ գործունէութեան վերաբերմամբ կարելի է ունենալ հաւատ, որ մի հոգեբանական գործն է. բայց երբ հաւատը չէ զրկված ընտելեան հիմքերի վրա (դրամայի առաջին մասը) եւ կամ անտեսական-հասարակական իրականութեան վրա (երկրորդ մասը)—այդ տեսակ հաւատի իրագործումը կը լինի հրաշք կամ այլ խօսքով՝ մարդկային ոյժից վեր...

Առում են, որ Բերբերեանի այս գրութեամբ ընդունակ է յոռետեսական հայացքներ ներշնչելու: Մենք համաձայն չենք դրա հետ: Յիշենք դրամայի վերջին գործողութիւնը (ի դէպ առաջին, թոյլ եւ աւելորդ՝ գեղարուեստի տեսակետից), որից իմանում ենք, որ մարդկային մղուսները զէպի իդէալը եւ ընտելեան են անհրաժեշտ, միայն թէ մարդ պէտք է հասկանայ, որ բանը մարդու ոյժից վեր է եւ որը նրա ոյժին համեմատ: Չը մոռանանք դրամայի

Այդ հասանքի առաջը կարող են առնել թէ մեր հայրենի ու մայրենի եւ թէ այն բարե-
րարները, որոնք չեն կարողանում ընտրու-
թիւն անել իրանց զիմուքների մէջ եւ նիւթա-
պէս մի բանի տարի ապահովացնելով թերուս
պատանիներին, օգնութեան փութարէն ընդ-
միշտ դժբաղդացնում են նրանց, ընտելացնելով
փափուկ ու անգործ կեանքի:

Ուսանողուհի

ՆԱՄԱԿ ԽՄԱԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կիւմով, փետրվարի 22-ին

Թող տուէ՛ք յարգելի «Մշակի» միջոցով յայտ-
նել ի գիտութիւն հայ գրագէտ կանանց հետե-
ւեալը: Մտադրութիւն կայ մի ժողովածու հը-
րատարակել բացառապէս հայ կանանց աշխա-
տակողութեամբ՝ հայերէն լեզուով, ինքնուրոյն
եւ թարգմանական գրութեան լեզուով կազմա-
մուտի խնդրում եմ պատելի հայուհիներին,
որոնք կը բարեհաճեն մասնակցել ժողովածուի
մէջ, յայտնել մեզ իրանց ցանկութիւնը՝ ման-
րամասնութիւններով հետ ծանօթանալու համար:

Մեր հասցէն՝ Киевъ. Фундуклеевская ул.,
№ 36. Студенту Гр. С. Джанумову.

Գր. Նաւոմեանց
Նիկ. Սաթուհեանց

ՆԱՄԱԿ ԽՄԱԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ալեքսանդրով, փետրվարի 22-ին

Խոնարհաբար խնդրում եմ մեր այս երկու-
ղին մի տեղ չնորձել «Մշակի» մօտակայ հա-
մարներից մէկում, որով մեզ աւիթ տուած կը
լինէ՛ք հրապարակով յայտնելու մեր անմաս լի-
նքը տարածված մի թիւի ենթադրութեան
մէջ: «Մշակի» № 36-ի մէջ ապագրված Ալեք-
սանդրովից ուղարկած այն լուրի հեղինակը
մենք չենք, որի մէջ տեղիս յայտնի հարուստ
Յ. Դրամբեան մեզագրութեմ է վախճանութեան
գործի մէջ:

Արժանահատ աղբիւրներից տեղեկանալով,
որ վախճանութեան մի այդ տեսակ գործ չը
կայ եւ չէ քննվում տեղիս երկրորդ գաւառա-
մասի քննիչի մօտ, մենք հրապարակով մեր
ձայնն ենք խոնարհ գայրայցած հասարակական
կարծիքի հետ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի նահանգապետի պ. պաշտօնակատա-
րը չը հաստատեց իշխան Ս. Մ. Արքուտիսի-
Իօզորուկովին Թիֆլիսի քաղաքային վարչու-
թեան անդամի պաշտօնի մէջ, ուստի եւ առա-
ջարկեց պ. քաղաքապետին նոր ընտրութիւն-
ներ անել:

Թիֆլիսի դռման իր վերջին նիստում, որ
տեղի ունեցաւ երկուշաբթի, փետրվարի 26-ին,
որոշեց տաւարի մի գինը նշանակել ֆուն-
տը 10 կօպէկ, իսկ ոչխարինը՝ 11 կօպէկ: Այս
տարի Թիֆլիսի վաճառանոցում պակասել է
մաքու անասունների քանակութիւնը թէ այն
պատճառով, որ գիւղացիները խոտի պաշարներ
ունենալու պատճառով չեն ծախում տնային
կենդանիներ եւ թէ վարակիչ հիւանդութիւն-
ների տարածման պատճառով, որ արգելք է
դրուում կենդանիների տեղափոխութեան:

«Кавказ» լրագրում կարդում ենք. «Վա-
ղարկապատի ոռոսաց եկեղեցու քահանայ Բո-
րիս Վենիամինովի միջոցով ոռոսագաւառու-
թիւն են ընդունել Բաշ-Աբարան գիւղի բնա-
կիչ հայ-լուսաւորչական ինչապետ Մարտի-
րոսեան, Չամբուր գիւղի բնակիչ Յովհաննէս
Աւանեսեան, նրա կին Մարիամը, նրանց որդի-
քը՝ Նիկիտը եւ Գասպար եւ Աննա աղջիկը: Բա-
ցի զբաղմունք Թիֆլիսում իշխան Օրբելիանովե-
րի անական եկեղեցու քահանայ Ստեփան Բե-
րիձէի միջոցով ոռոսագաւառութիւն է ընդունել
մի հայ-լուսաւորչական աղջիկ՝ Մարիամ Մա-
մուկեանը:

«Россия» հայորդում է, որ Խարկովի արա-
կան գիւմնադիպում, ժողովրդական լուսաւո-
րութեան միջնարարի թոյլտուութեամբ, ֆրան-
սերէնի դասատու են հրաւիրվել ուսուցչուհի-
ներ:

Լեռնային ղեկարարամէնտի ունեցած տեղե-
կութիւններով՝ 1900 թվականի օնթացքում
Ռուսաստանի բոլոր ոսկեհանքերից ձեռք է
բերված 2,332 պուղ եւ 30 ֆունտ ոսկի:

Բիւկինթի գրավաճառանոցը յայտարարում
է, որ «ВРАЧ» բժշկական թերթի խմբագիր
հանգուեալ Վ. Ա. Մանասէի վերջին կամքն
էր, որ նրա մահվանից յետոյ «ВРАЧ»-ը հրա-

տարակվի միայն մինչեւ այս տարվայ վերջը
եւ որ այնուհետեւ նրա հրատարակութիւնը
ընդ միշտ դադարի:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Յաւելով պիտի
յայտնեմ, որ մեր քաղաքի հայտարար դատա-
ւոր պ. Լ. Սամկովից թողնում է իր պաշտօնը:
Պ. Սամկովից իբրեւ մարդ ազնիւ է, իսկ իբրեւ
դատաւոր՝ աննման: Նա դատում էր խղճով, իսկ
ամենագլխաւորը՝ անկաշառ էր: Պ. Սամկովից
մնաց մեր քաղաքում մօտ 10 տարի եւ անխտիր
ամենքի համակրութիւնը վայելեց: Ազգերի խը-
րութիւն չը կար նրա համար: Հասարակու-
թիւնը ձաշ է սարքում ի պատիւ նրա»:

ԱՆՆԱՄԻՑ մեզ գրում են. «Գարունը մեզ
մօտ վաղ սկսվեց: Բաւական ժամանակ է, ինչ
դաշտերում երեւացել է մանուշակ եւ ծաղիկ
են նշենիները: Զարմանալի ձմեռ ունէինք այս
տարի: Զին համարեա թէ չկաւ. օրերը շա-
րունակ պարզ եւ տաք էին: Անտառային վար-
չութիւնը բացեց մի անտառ, որի չնորհիւ
փայտի սաժէնի գինը 36 բուբուց իջաւ 25
բուբուց»:

ԱՍԽԱԲԱԳՐՈՒԹԵԱՆ մեզ գրում են. «Մեզանում
այս տարի մեծնորների թիւը չափազանց զգա-
լի է: Անցեալ տարիներում, մի ամբողջ տար-
վայ ընթացքում, մեծնոր եղել է 30—33 հոգի,
մինչդեռ այս 11/2 ամսվայ ընթացքում վախ-
ճանվել են 15—16 հոգի: Մեծնորների մեծ
մասը աղաժարդիկ են եւ վախճանվել են թո-
բախտից»:

ՂԱԶԱԽԻ գաւառից մեզ հաղորդում են, որ
հացը այժմ էժանացել է. յորենը արժէ 70—75,
գարին 38—40 կօպէկ: Տնային կենդանիները
համեմատաբար թանկ են: Գիւղացիները տա-
փարակում սկսել են իրանց հողագործական
աշխատանքները: Լեռնային մասում վերջին
անձրեւների չնորհիւ բացվում են դաշտերը:

ԼՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Ինձնէրների
մի խումբ, գլխաւոր ինձներ Լինդէյի ղեկա-
վարութեամբ, ուղարկված էր այստեղ Բազուի
քաղաքային վարչութեան կողմից Ղուբայի
գաւառում Բազու տանկու ջուր գտնելու հա-
մար: Այս խումբը, մի տարուց աւելի հետա-
գոտութիւններ կատարելուց յետոյ, գտել է, որ
անհնար յարմարը Ղուբայի գաւառի Շօլար
գիւղի մօտ եղած ջուրն է: Զուրը «Լարաւու»
է կոչվում եւ լաւ յատկութիւն ունի: Փորձի
համար ինձներները ուղարկել են ջուրը սը-
րուակներով Բազուի նահանգական բժշկական
վարչութեան, որը, քիմիական վերլուծութիւն
անելուց յետոյ, գտել է, որ ջուրը մաքուր է եւ
առողջարար, աւելի լաւ յատկութիւն ունի քան
Սաւուր գետի ջուրը: Զրի տեղից մինչեւ Բա-
զու հարիւր վարկոտ են երկու վերստ եւ
չրանց չենելու ծախքերը հաշուած են մօտ
տաս միլիոն բուբու: Զրանքի ծրագիրը պիտի
կազմվի մինչեւ երեք-չորս ամիս, իսկ խող-
վանքը դնելու գործը կըսկսվի այստեղ եօթ-
ութ ամիսից յետոյ: Հաշուով ջրանցքը մի րօ-
պէսում պիտի տայ Բազուին 100 վերստ ջուր:
Այսպիսով բազուցիները, վերջապէս, կունենան
լաւ, մաքուր, առատ ջուր: Հետագոտող ին-
ձներների խմբին ծախքերի համար տուած է
քսան եւ երկու հազար բուբու»:

ԱՍԽԱԲԱԳՐՈՒԹԵԱՆ մեզ գրում են. «Այս տարի
ձմեռ բոլորովին չէ եղել այստեղ: Մինչեւ այժմ
մենք ձիւնի երես չենք տեսել, արեգակը մեր
երկնքից համարեա անպակաս է եղել, բայց
մի եւ նոյն ժամանակ անպակաս է նաեւ Աս-
խաբադէ հողանկած փոշին, որը միակ վատ
յատկութիւնն է մեր քաղաքից»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲՐԱԶԻԼԻԱՅԻՑ *)

Ս. Պալո, յունվարի 19-ին
Երէկ, ամառս 18-ին, կէս օրէն վերջ տե-
ղայ փոքրիկ հայ գաղութի մէջ տեղի ունեցաւ
մի ապօրինի եւ անվայել հարսանիք, եւ
որովհետեւ հայերուս սուրբ եկեղեցւոյ օրէնքին
հակառակ եւ մեր ընտանեկան յարկի տակ չի
ընդունուիլ այսպէս խայտառակիլ ամուսնու-
թիւն, լաւ համարեցինք նկարագրել այս ամեն:

*) Տպագրում ենք այս նամակը իբրեւ մի հետա-
քրքրական պատկեր Բրազիլիայի հայերի կեանքից:
Նամակագրել, ինչպէս երևում է, ծանօթ է հայոց
լեզուին եւ գրելու արուեստին այնքան, որքան այդ
հարկատու է վաճառականին: Մենք շատ փոփոխ-
ութիւնների ընթերցանք ենք անում:

Զարձուածքներն՝ գիտցնելու մեր հասարակու-
թիւն, թէ ինչիւր տեղի կունենան մինչ իսկ
Բրազիլի մօտ խորհուրդ մէջ:

Խորհրդի Սինամուս թաղէն Գասպարեան
Յակոբ իւր 15 տարեկան Նազու աղջիկն
ամուսնացուց իւր հարազատ եղբոր Բաղդասար
Գասպարեանի հետ: Այս պարոնը 40 տարեկան,
հասակով մի կարճ ողորմելի մըն է: Ուրախ եմ
ըսելու, որ տեղոյս 30-էն աւելի հայերէն հագիւ-
3 անձ հանդէսին ներկայ գտնուեցան, թէեւ օր
առաջ ամեն դասակարգի, առանց մէկը մոռա-
լու, հրաւիրագիրներ ուղարկուած էին Տեսարա-
նը շատ ցուրտ էր, կըսուի թէ 75 տարեկան ծեր
մայրերին արեւն արցունք կը թափէ եղբւ
ամիսներէ առաջ խօսքուածներուն վրայ, դէմ
կենալով որ չըլլայ թէ իւր գաւառներն այսպիսի
պակասութեան մէջ իրենց անուններն արա-
տաւորեն կիրակի իրիկուն, երբ նշանտուքի
արարողութիւնը կը կատարէին, տեղոյս վաճա-
ռականներէն տեսար Թ. Թ. Ներկայ կը գտնուի:
Ուսելէն խմբէն գլուխներն տաքնային վերջ
աղջկան հայրը Թ. Թ.-ին կը գիտացնէ, որ աղ-
ջիկն եղբոր հետ պիտի նշանէ: Հիւրը, որ ան-
տեղեակ էր գործուն, չնորհք ըրէք, կըսէ, ես
պէտք է աւելց մէկնիմ դուրս: Աղջկան հայրը,
իւր թախանձանքէն վերջ, մեղմ ձայնով մը կը
պատասխանէ. «Եր ներքէ իրաւ, քիչ մը մեղք
է, սակայն ինչ ընեմ, քանի որ եղբայրս կը
սիրէ աղջիկս, գիտես որ ես ալ ծերութեան
մէջ սկսած եմ մտնել, 5—6 զաւակներու տէր
եմ, ուստի զիս եղբայրս պիտի պահէ. ես չեմ
կրնար անոր սիրած կոտորել: Ախ, բարեկամս,
կըսէ, ինչ բան, մեղքը պատրիարքարանի չըլ-
լին, մենք անոր խաբուեցանք: Զէ որ ես գնա-
ցի առկէց Մարսէլ, 5—6 երկայն ամիսներ ժա-
մանակ անցուցի, Մարսէլի հայ եպիսկոպոսին
ներկայացայ, ամբողջ գաղափարներս սրբազա-
նին առկէր բացի: Շատ չնորհալով եմ, սրբա-
զանք փափաք յայտնեց իմ գործս կարգադրե-
լու եւ անոր յանձնարարութեամբ դիմեցի
պատրիարքարան, երկու եղբայրներուս լուսա-
նկարներն ալ զրկեցի: հազիւ կարողացայ մէկ
եղբորս մի աղջիկ ընդունել: Երանի թէ ան ալ
չի գար: Ես գոհ եմ, սակայն անակ կը կարծեմ,
թէ եղբորս աչքին շատ հաճելի չի երեւիր:
Ինչ կարուհանկամ, մէկ խօսքով պզտիկ եղբորս
սրտերնուս ուղածին պէս աղջիկ մը չի կրցա
գտնել պատրիարքարանս. իրաւ է, որ մէկ
երկու աղջկայ լուսանկար ընդունեցի: Պօխեցէ,
տեսայ որ իմ եղբորս եւ ատ աղջիկներուն մէջ
լինեն իմանք»:

«Մշակի» ընթերցողներն կարող են աչքի
անցունել անցեալ մայիս ամսոյն № 98-ի
«Խառն լուրերու» տակ Կ. Պօլսի «Սուրհան-
դակ» լրագրէն առնուած մի փոքր պատկեր
«Հայու թափառական կեանքին»: Անա այդ
փոքր նմուշը կը վերաբերուի այս Գասպա-
րեան ընտանեկանը: Ժիշդ էին այն բոլոր լրա-
գրական տեղեկութիւններն: Այս զէպը ման-
րամասն եղելութիւններն, արդէն աստիճան Մար-
սէլի հայ թերթն ալ կարողացածին չափ գո-
վեստներ տալէն վերջ, անչափ փառաբանած էր:

Թէեւ նամակին երկարացաւ, լաւ կըլլայ
մեր ունեցած տեղեկութիւնները եւս մի քիչ
նկարագրել, գոնէ սորվեցնելու մեր առաջնորդ-
ներուն, որ ամեն գործ աղէկ մը չի տեսնուածա-
րած՝ ձեռնամուխ չըլլան: 5—6 տարիներէ ա-
գին տեղոյ այս գրեթատանի երեք եղբայր-
ները առեւտրական գործով կը զբաղին. մի
տարի առաջ իրենց ծեր մայրը եւ Տիար
Յակոբի 3 զաւակներով միասին Խորհրդէն
մեկնեցան տեղոս գալու: Տիար Յակոբն ալ ան-
կէջ ուղեւորվեց զէպի Մարսէլ իւր մայրն եւ
հայկերէն գիմաստրիկ. որչափ որ տեղոյս
հայերուն դիմաւորելը կը գիտցնէին, սակայն
րուն նպատակներն հայու աղջիկներ գտնալ էր:
Տիար Յակոբ Մարսէլ հասածին պէս գտաւ
վանցի մի այլի կին եւ ամուսնացաւ Մարսէլի
մէջ, եղբայրներուն համար դիմեց պատրիար-
քարան՝ Եւրօպայի հովիւ Գէորգ եպիսկոպոս
Իւթիւհեանի յանձնարարութեամբ Մէկ եղբայրն,
պատրիարքարանի ընտրութեամբ որոշուած
աղջկան լուսանկարն տեսնելու պէս, հաճեցաւ
եւ աղջիկն կեւա Մարսէլ, իսկ պատիկ եղբորը
համար աղջիկներու լուսանկար զրկուեցաւ
Պօլսէն Մարսէլ. չի հաւանցաւ երրորդին, թէեւ
որոշում կայացուցին, սակայն առանց սպասե-
լու վերջնականին՝ ձգեցին Մարսէլը, եկան տե-
ղոս, Ս. Բուլո: Ինչ որ ալ ըլլայ՝ իրականու-
թիւնը այս է, որ Մարսէլէն չի մեկնած ի-
րենց գլխուն մէջ դարձաւ աղջիկին իրենց եղ-
բոր հետ ամուսնացնելու: Անա թէ ինչպէս, տե-
ղոց 3—4 տարիներէ աստիճան Ս. Պօլսուսար
կըսէր, որ եթէ հայու աղջիկ չըլլայ՝ անկարելի
է ինձի ամուսնանալ. ասոր հետ միատեղ, երբ

կրտսեր եղբայրին Մարսէլ գնաց, որչառած
էր, որ առանց աղջիկներու եւ չի դառնայ, այս
երկու պարզ պատճառներով էր, որ րաինք թէ
Մարսէլի մէջ արդէն ամեն բան կարգադրուե-
ցաւ: Ուրեմն, ընթերցող, կայ որ եւ է լրա-
ւունք յարձակիլ պատրիարքարանի վրա: Պէտք
է ասեմ, որ ասուք բողոքական են:

Մենք պատկեր արարողութիւնն ալ պատմե-
լով վերջ տանք մեր նամակին: Հարսանեաց
հանդէսէն 5 օր առաջ դիմեցին քաղաքային
վարչութեան տունը, որպէս զի իրաւունքի
հրամանագիրն ընդունեն, վարչութիւնը իրա-
ւունք չի տուեց, ասելով անկարելի է,
քանի որ այդպիսի օրէնք չունինք, եթէ մի-
միայն Փափայէն մեզի մի հրաման բերէք, այն
ատեն կարող ենք պատիւով ընդունել ձեզ եւ
արձանագրել ձեր ամուսնութիւնը: Ասկա մեր
այս մարդոց համար թէեւ ապտակ էր, սակայն
գիտէին թէ դեռ ինչ կրնան ընել: Երկրորդ դի-
մումին եղաւ մի սուրիայի լոյն քահանայի.
Քահանայ իրենց խնդիրքը լսելէն վերջ մի ար-
դարացի յանդիմանանք կը կարգայ իրենց զըլ-
խուն. անկարելի է, կըսէ, որ ձեզ պատկեմ.
մեր եկեղեցւոյ օրէնքէն դուրս ըլլալէն զինի՛
գիտեմ, որ ձեր հայ եկեղեցին ալ երբեք լրա-
ւունք չի տար. ուրեմն կը յորդորեմ ձեզ որ-
պէս զի պատճառ չըլլաք այս անօրէն եւ ան-
տեղի գործուն... Գլխիկոր դիմեցին աս ան-
գամ կաթօրիկ կղերին. կղերը առաջին ան-
գամ քիչ մը տրտունջեց, յետոյ, երբ անիրաւ
ժամանային ձայնը լսեց, կարող էք, ըսաւ. ես
նոյնպէս կարող եմ պատկել. իրաւի, իրենք
կարողացան աղջիկին իբրեւ կին ընդունել,
կղերը նոյնպէս կարողացաւ կորել 300 ֆրանկը
եւ այսպէս կատարուեց պատկը:

Մօրիս

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«American Register» ճիշտ տեղեկութիւն-
ներ ունեցող աղբիւրից քաղելով, հաղորդում է,
թէ անգլիական եղուարդ թագաւորի առողջու-
թիւնը ընդհանրապէս շատ վատ է: Թագաւորը
իբր թէ ներարդային անբաւական հիւանդութիւն
ունի եւ բժշկիչներն անխաղաչաւում են, որ
նա երկու տարուց աւելի չի ապրի: Երկրի
դուրը՝ անգլիական թագաժառանգը՝ Նոյնպէս
թոյլ առողջութեան տէր է եւ նրա ձանապար-
հորդութեան նախագիծը զէպի Աւստրալիա
կազմված է գլխաւորապէս նրա համար, որ ծո-
վային ձանապարհորդութիւնից եւ կիմայի փո-
փոխութիւնից բարեկարգ հետեւանքներն սպա-
սում դուքսի առողջութեան համար:

Կ. Պօլսի եւրօպական զեպանքերի միա-
բան յայտարարութիւնները սուլթանին Մակե-
դոնիայում խաղաղութիւն պահպանելու վերա-
բերմամբ՝ Սօֆիայի «Вѣстникъ» լրագրի ասե-
լով՝ բացասական արդիւնք ունեցան: Թիւրք-
ական կառավարութիւնը քաղաքականապէս
սկսեց հաւանք բողոքներին Օսմանեան կայս-
րութեան մէջ եւ, փոխանակ խաղաղացնելու, իր
գործողութիւններով աւելի եւս զրգուցնում է
առանց այն էլ զրգուցնող կրքերը: Կ. Պօլսում
բանտարկված են բոլոր ականաւոր բողոքները,
որոնք ոչ մի բանում մեղաւոր չեն: Այնպէս որ
առեւտր զեպանքութիւնը ինքը ստիպված էր
պաշտպան կանգնել նրանց: Բողոքական ուսու-
րիարքարանի օրդան «Вѣстникъ» լրագրի նորից
դադարեցրած է: Սալոնիկում բանտարկված են
մօտ 2,000 բողոքներ, բացի այն կալանաւոր-
ներից, որոնք իւրաքանչիւր օր չըլծալակաւ
բերում են Սալոնիկ գաւառներից: Մալոնիկի
աւստրիական պատի վարչութիւնը հաղորդել է
թիւրքական իշխանութիւններին այն բողոք-
ների ցանկը, որոնք աւստրիական պատով
պատուիրված նամակներ են օտանում: Նրանք
բոլորն էլ ձեռքաւորված են եւ ենթարկվում
են անգլիկ տանջանքներ: Շատ կալանաւոր-
ներ, չը գիմանալով անտանիկ ծեծին եւ չոր-
չարանքներին, մեռնում են: Երբ երկաթուղու
գնացքները Մալոնիկ են հասնում՝ կայարանում
ամեն անգամ զարհուրելի տեսարաններ են
տեղի ունենում: Ոստիկանութիւնը, առանց պա-
նագանալու մեղաւորին անմեղից, բռնում է
ամեն մի բողոքացու, որ գալիս է գաւառից:
Սալոնիկ անձնակազմը դրոնդուի: Երբ փողո-
ւերով նրանց տանում են բերդը՝ Թիւրքերից,
գնչուներից եւ հրէաներից բաղկացած ամբողջ
քարեր է ձգում նրանց վրա: Գործախտ գոնիքը,
արհեստավար, կիսամեռ, զգուսմ են բերդի
ստորերկրայ խնամ, մոլթ գնանալարակը,
որտեղից ալ եւս նրանց վիճակված է լոյս
աշխարհ դուրս գալ: Այդ տեղեկութիւնները հա-
ղորդելուց յետոյ լրագրիւր ասում է, թէ այս-
պիսի միջոցներով Մակեդոնիան չի խաղաղի:
«Մակեդոնիան կը խաղաղի այն ժամանակ, —
բացականչում է լրագրիւր, — երբ երկիրը վերջ-
նական աւերման կը մատնիլ սահական հրո-
սակներից եւ կամ երբ կարգապահ թիւրքական
բռնակալութիւնից: Միջին տեղ չէ կարող
լինել Ռուսաստանը չէ կարող ցանկալի հա-
մարել խաղաղացման առաջին միջոցը, ո-
րովհետեւ նա սլաւոնական եւ քրիստոնէայ
պետութիւն է: Երբ Մակեդոնիան խաղաղաց-
նելու պատրուակով բողոքական գիւղերը
կսկսեն լողալ արիւնի մէջ եւ երբ հրդեհ

Типографія Грузинск. Т—ва. Большая-Ваневская ул. № 27